




ՀԱՅԿԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 124

6 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1913

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ

ԵՍ ԵՐ
ԵՆՍԿ
ՏՈՒՐԻՆ

ԵՍ ԵՐ
ԵՆՍԿ
ՏՈՒՐԻՆ

ԲՍԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.— Թուրքիոյ համար տա-
րեկան՝ 40 դհկ. արծ. վեցամսեայ՝ 20.— մէկ թիւ՝ 1 դհկ.— Արսաւահ-
ւան՝ տար. Զր. 10. վեցամս. 5.— Վճարմունք կանխիկ են:

ՀԱՍՑԷ.— Կաթողիկէ Արձագանգ, Բերա, 5. Պայրամ փողոց 5, 4.
Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ.— 1.— Արձագանգ կը հրատարակուի
Շաբաթ օրերը: 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ ան-
պատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն զրկուած ու է
յօդուած: 3.— Կեղծանունով զրկուած յօդուածներու հեղինակը
կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրասրահին:
4.— Ձեռագիրները ետ չեն դարձուիր: 5.— Յօդուածներու
ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը մի-
այն: 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք
կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է
անհրաժեշտ երկու դահեկանի նամակագրոյժի միասին զրկել:

ՏՊԱՐԱՆ Կաթողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5:
Տպարանս ըստ ամենայնի ճոխ և ի վիճակի է որ և իցէ տպա-
գրական գործոց համար: Կը տպուին ամէն տեսակ ծանուցմունք,
գիրքեր, տետրներ, հրաւիրագիրներ, քարդեր, քարդ-ատրէաներ,
մահազդներ, եւն., եւն.: Գիները անմեղքեղի կերպով աժան են:
Գեղեցկագիտական ճաշակի և տպագրական մաքրութեան կող-
մանէ յաճախորդները անտարակոյս գոհ պիտի մնան:



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՏՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏՆՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԱԹԱԹԱԹԵՐԹ

Երրորդ տարի Գ 6 Դեկտեմբեր 1913 Գ Թիւ 124

«Մրբազան Քահանայապետն Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Արձագանգ շարքաբերքը շարունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մասնաւոր ի գաւառոս, փրկարար առաքելութիւն մը կատարել, ի բարգաւաճման կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար Մրբազան Հայրն սրտագին կ'օրհնէ յիշեալ Շարքաբերքը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ Կարգ. Մէրի Տէլ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս Ժ.Բ. Թեոքեան, Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ 23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քուտմամբաւ:

ԴԵՊՔԵՐ ԵՒ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐ Ա. ԻՆՉ Է ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Կ'ուզենք որ մեր ազատութիւնն ալ աւերիչ չըլլայ՝ այլ չինիչ. հարկ է որ յարգենք անոր օրինաւոր սահմանները: Որո՞նք են այդ սահմանները: Առաջին՝ ուրիշի ազատութիւնը. որովհետեւ մարդս բացարձակ ազատութիւն չունի այլ պայմանաւոր, հետեւաբար կարելի չի անհատական ազատութեան սահմանէն դուրս ելլել առանց ոտնակոխելու, բռնաբարելու ուրիշի ազատութիւնը. զեղծումը միշտ բռնաբարիչ է ինչ անուան տակ կ'ուզէ թո՛ղ ըլլայ. անհատական ազատութիւնները զուգահեռական քա-

ղելու են, զեղումը բախում կը բերէ՝ բախումը իրաւունք չի տար երկու կողման և եթէ մին տապալի՝ միւսը կը բռնաբարէ. Ուրիշն ինչպէս կեանքը՝ նոյնպէս ազատութիւնը իր անհատական շրջանն ունի, որմէ դուրս խուժելու չէ. Ի՞նչ է առաքինութիւնը. այն զսպանակն է որ իւրաքանչիւր ազատութիւն ձգէ և դործօն պահելով մէկտեղ անհատական առանցքի շուրջը պիտի կը պահէ և կ'ապահովէ ամէն մէկուն սահմանն ու շրջանը. Մերձեցուցէք ըսածս առանձին պարագաներու և պիտի տեսնէք պէտքը առաքինաբար ազատ մնալու և ազատ գործելու: Ամբողջ բարոյագիտութեան հիմն է ըսածս, որուն մանրամասնութեանց կարելի չէ իջնել առանց նիւթէ շեղելու. — Գանք երկրորդ սահմանին որ Օրէնքն է. սա ընկերական կեանքի մէջ ազատութեան շրջանաւոր կը գծէ. և ամէն ոք համակերպելու է

անոր պահելով հանդերձ ամբողջ ազատութիւնը . առանց օրէնքի՝ ազատութիւնը ուղղիչ գետ մըն է , անզուսպ հրդեհ մը , անսաստող փոթորիկ և աւաղ որքան աւերիչ : Զեղծումի դէմ սահմանը երբեք բռնաբարում չէ . ընդհակառակն այդ սահմանին դէմ աքացումը՝ ազատութեան վտանգումն է : Պարզ օրինակաւ բացատրեմ ըսածս . ի՞նչ կ'ըսէիք այն աշակերտին որ ուզէ զոր օր . թուարանութիւն սորվիլ՝ սակայն արհամարհէ անոր օրէնքները , կամ ո և է լեզու մը ձեռք բերելու աշխատի՝ ոտքի տակ առնելով այն լեզուի քերականութեան օրէնքները , ըսելով թէ ազատ եմ . կրնա՞ք արգարացնել այդ ազատութիւնը . յայտնապէս ո'չ : Առաջ երթանք . ի՞նչ կ'ըսէիք այն անձին որ ընկերութեան մը և նոյն իսկ ամենէն ազատական կուսակցութեան մը ուզէ անդամակցիլ , և եթէ ասոնցմէ մին ազատ եմ ըսելով թուարանութեան ու քերականութեան որոշ օրէնքները յեղաշրջէ , և միւսը ընկերութեան կանոնները ոտքի տակ առնու , պիտի ըսէ՞ք թէ ազատութեան իրաւունքով է որ այդ կ'ընէ . ո'չ , այլ մէկը յիմար , միւսը խռովարար պիտի ըսէք , երկուքն ալ զեղծող ազատութեան : Բարձրացուցէ՞ք տեսութիւններդ , ընդարձակեցէ՞ք օրէնքը աստուածային ու մարդկային իրաւանց պահանջին չափ և գուք պիտի հասկնաք թէ ազատութիւնը քանի՞ քանի՞ եղանակ յարկելու է օրինաւոր ըլլալու համար : — Կայ երրորդ սահման մըն ալ ազատութեան . հարկը , որուն առջեւ նա իր չափաւորութիւնը ճանչնալու է : Երեք տեսակ հարկ կայ . ստիպման կամ բռնարարութիւն հարկը , որ արտաքին զօրեղացոյն պատճառէ մը կու գայ : Վախճանական կամ օգտի հարկ , որ գործի մը բնական պահանջն է ու պէտքը յաճախ . զոր . օր . գրելու համար հարկ է գրիչ գործածել , կտրելու համար դանակ , ծովու վրայէն ճաթորդելու համար նաւ , ցամաքի վրայ համակերպելու է օրերով կամքի մը մէջ օրօրուիլ (մեր երկրին մէջ) : Բնական կամ բացարձակ հարկ , որ բնութեան օրինաց անյեղկիւթեան վրայ հիմնուած է : Առաջին հարկը՝ ազատութեան

դէմ է և կրնայ ապօրինի ըլլալ՝ եթէ ստիպում գործողը արդարացուցիչ ո և է ախտը մը չունենայ . մարդ մը բանաւարկել արգարութեան պաշտօնէի մը համար օրինաւոր է . իսկ անհատի մը համար ապօրինի : Միւս երկու հարկերը ազատութեան արգելք չեն , ընդհակառակն անոր գործադրութիւնը կը դիւրացնեն : Եւ առանձին կերպով երրորդ հարկին վրայ խօսելով , որուն առջեւ կը գտնուի մարդս , պէտք է ճանչնալ թէ կամքը բարւոյ և միտքը ճշմարտի հարկին մէջ կը գտնուի այնպէս որ կամքը և միտքը իրենց բնութիւնը և վախճանը ուսանալու են մերժելու համար այդ եղանակը : Եւ այսպէս չափ յայտնի է որ չարիք գործողն իսկ գործին բարի անունը կու տայ , սուտ խօսողն ալ սուտը ճշմարտութեան անուամբ քաշեցնել կ'ուզէ : Մասնակի բարւոյն և մասնակի ճշմարտութեանց մէջ ազատութիւնը կրնայ մոլորիլ կամ զեղծանիլ , բայց ոչ ընդհանուր , վերացական իրաւոյ և ճշմարտի մէջ : Անոր համար կամքի ի չարն , մտքի ի սուտն շարժումը՝ զեղծում է ազատութեան և պատասխանատու կ'ընէ գործողը :

Անոր համար չ'արդարանար Լայպնիցի նմանութիւնը , որով կամքը կը համեմատէ նժարի , որ այն կողմը կը կքի ուր աւելի ծանրութիւն կայ . կրքերը իրաւ է կամքի վրայ կը ծանրանան , բայց կամքը տնքան , անգիտակ , բռնութիւն թանձր նժար մը չէ . նա ազատ է , ինքնորոշում , ինքնապիտակցութիւն ունի , եթէ ուզէ՝ կրնայ զիմադրիլ կրից ծանրութեան . ո'չ , մարդս Փիլիքական մեքենայ մը չէ , այլ բանաւոր է և իր շարժումին տէր . հետեւաբար իր ուզելովն է որ կրնայ տեղի տալ կրից կամ անոնց յաղթահարել : — Չ'արդարանար Դարձեալ Բանդի սկզբունքը , որ զկամքը բնական պատճառներու կարգը զննելով , անկից առաջ եկած ամէն արդիւնք հարկաւոր կը նկատէ իրեն թէ կամքը ստիպուած ըլլայ գործածը անպատճառ գործելու : Կամքը պատճառ է այո՛ իր գործողութեանց , բայց ազատ պատճառ որ կրնայ միոյն տեղ միւս գործողութիւնը արտադրել . կամքը գիտէ ըրածը , որոշած է կանխաւ վախճանը

և առ այն ուղղած է իր ընթացքը. ուստի ստիպման տակ չէ իր գործին մէջ և կը մնայ միշտ պատասխանատու ըրածին: Յիշեցէ՛ք քիչ վեր բացատրածնիս ոգատութեան մասին և դուք ձէգէն պիտի տեսնէք այս երկու փոխադրուից իմաստակութիւնը. երկուքն ալ կրքերու օրէնքի մը անխուսափելի օրէնքն գերի կ'ուզեն նկատել մարդկային կամքը. մե'ղք մարդկային արժանապատուութեան: Անոնց ըսածէն տարբեր չէր Գաղղիոյ մեծ յեղափոխութեան շահատակնորուն ըրածը, որ ազատութեան կամքին առջեւ բազմերամ աղանդներ թուղին վզերնէն կախած այս խօսքը. «Այսպէս կ'ուզենք ազատ ըլլալ» . սննդաներու պէս որ ըրածնին չեն գիտեր, որ տէր չեն իրենց գործողութեան, որ նիւթական բնագոյնի հարկին տակ ճշնշուած զարգացումի սահմանաւոր չեն: Ո՛չ, ո՛չ, մենք սննդան չենք այլ բանաւոր և չենք ուզեր անբանօրէն բնագոյնի սնդիտակցութեամբ մղուիլ, այլ մնալ և գործել մարդկօրէն ազատ և ազատօրէն մարդ: Հետեւաբար կ'ուզենք տէր մնալ այն ազատութեան որ մարդկային կամքի ցոլացումն է, այն գերազանցութեան, որով Ստեղծողը զայն անսահման դասակարգէ վեր դրաւ ամէն ստորին արարածոց վրայ տէր իշխան և թագաւոր, «Արասցում մարդ ըստ պատկերի մերում եւ ըստ նմանութեան եւ իբնեցեան ձկանց ծովու եւ բռնոց երկնից եւ անասնոց եւ ամենայն երկրի եւ ամենայն սողնոց, որ սողին ի վերայ երկրի» . նշանակելով նաեւ այլարանօրէն այն տիրողութեան, զոր մարդ կը ստանար կրքերու վրայ որոնք գետնաքարէ կը ստորնացնեն զմարդ մինչեւ յապականութիւն և զեղծում: Ազատութիւն չէ կրքի ծառայութիւնը, այլ ազեղ ու ստորնացուցիչ գերութիւն, որով միշտ իրաւ է քրիստոնէական սկզբունքը թէ ինչ բանով որ մէկը մեղանչէ անոր գերին կ'ըլլայ (Պետ. թղթ. Կաթ.) : Չենք ուզեր երբեք Լուսերի հետ կարծել որ առաջին «մեղքէն ետք ինքնիշխանութիւնը լոկ անուանական ըլլայ և թէ իր կարողութեան մէջ եղածը : գործած

առեն կը մեղանչէ մահացու կերպով¹» : Ո՛չ, անարգանք է այս մարդկային արժանապատուութեան և ինքնագիտակցութեան. առաջին մեղքէն վերջն ալ մարդը ազատ է և եթէ ուզէ կրնայ սանձել կրքերը ու անոնց իշխել և կրքերու այս սանձահարութեան մէջ է որ ազատութիւնն ա՛լ աւելի կը ցայտի. ընդհակառակն կ'ուրանայ կամ գէթ կ'անտեսէ ու կը ծախէ իր ազատութիւնը այն մարդը որ կրքի կը ծառայէ : Ազա՛տ է այն որ չի տանիր զրկանքի մը, նախատանքի մը իսկ և ձեռք կը զարնէ վրէժխնդրութեան կամ քննախնդիր դատաւանութեանց. ազա՛տ է այն որ հաճոյից գետնաքարէ յղժութեանց մէջ կը սողոսկի. ազա՛տ է այն որ հարցատութեանց բեռն տակ կը տքայ. ազա՛տ է այն որ վայրկենական փառքի ետեւէ կը հեււայ. ո՛չ, ազատ չեն սասնք. այլ անոնցմէ են որ Պետրոս Առաքելոյն ըսածին համաձայն իրենք զիրենք արդարացնելու համար կը ջանան «իբրեւ պատուակ չարութեան ունել զազատութիւնն (Ա. Պետ. Ա. 16) : Ազատութիւն չէ անպատճառ իր ուզածն ու խորհուրդը քաշեցնել, առաջինը կամապաշտութիւն, երկրորդը պնդագլխութիւն կ'անուանենք : Ազատութիւն չէ ձեռնհասութենէ վեր գործքի մը մէջ նետուիլ. այս՝ յաւակնութիւն, յանդգնութիւն կ'ըսուի, որով վարուողները «արհամարհով տեսնուցանեն, յալիւհիւ, յանդգունք չզանգիսեն զփառսն հայնոյել» (Բ. Պետ. Բ. 10) : Ազատութիւն չէ ինքնիրեն հաւելիլ և միայն իր ետը պաշտել, այս՝ որքան ալ ինքնագիտակցութիւն ըսուի, ինքնահաճութիւն, անձնապաշտութիւն է : Ազատութիւն չէ անպատկառ ըլլալ ամէնուն առջեւ, մեծ չճանչնալ բնաւ, միայն զինքը վեր դնել. այս՝ հպարտութիւն, գոռոզութիւն և անսաստութիւն կ'ըսուի : Ազատութիւն չէ ամօթի և պատուոյ քօղը պատռել, անառակութիւն է. որով «իբրեւ զանխօս անասունս ըստ բնածին բարուցն յեղծումն եւ յապականութիւն ուրոց չենն գիտակցանոյն

¹ 36. Նախագ. Լուսերի դատապարտեալ Լէոն ք. 4 «Exsurge Domine կոդեպիւս 46 Մայիս 4520»

յապակեանութեան իւրեանց» (Բ. Պետ. Բ. 12): Այս՝ կրքերու զերութիւնն է, ապակեանութեան ծառայք են այս տեսակ ազատները, որ գործքով կ'ուրանան՝ բերնով խոստացած ազատութիւննին «Մեծաբանս սնոցեաց բարբառեալ» (Անդ):

Ազատութիւնն է ընդհակառակն իր եւր ձեռք առնուլ և կրից փոթորկին զիմաց զայն կշռել, զեկալարել կենաց յոյգերու ծովուն մէջ և առնարար վեր պահել ազատութիւնը ամէն կրից հոսումէ: Ո՛վ Կեսար, կ'ըսէր Կիկերոն, դուն աւելի մեծ յաղթանակ մը ձեռք բերիր անձդ յաղթահարելով, քարկութիւնդ զսպելով, փրէժիւնդրութիւնդ սանձելով, նրւածեալ թշնամւոյն ներելով, քան եթէ հաւաքաւոր բանակներ տապալէիր. վասն զի ասոր մէջ բախտը, գինու մթերքը, տեղւոյ յարմարութիւնը, զօրաց գործակցութիւնը իրենց մասը կ'ունենան. բայց անձիդ նուաճումին մէջ միայն դուն ես որ ամենամեծ ուսոյ մը կը յաղթահարես, անձիդ, եսիդ, ինքնիշխան տէր կ'ըլլաս և ատով Աստուծոյ ամենաման կ'ըլլաս: Հեթանոս մըն է խօսողը, որ բնական լուսով կ'ընդունարէ մարդուն մէջ Աստուծոյ նմանութիւնը, Անոր ինքնիշխանութեան հաղորդակցութիւնը անձին տիրողութեան մէջ: Ուրեմն, ո՛վ ազատասէրներ, պիտի հրաւիրէի զձեզ հոս ձեր անձին վրայ ցուցնելու քարոզած ազատութիւնիդ՝ անշահախնդրութեամբ հանրային բարւոյ եւ բարեկարգութեանց մէջ, վեհանաճութեամբ զրկանքի ու նախատանաց դէմ, անսխակալ վեհանաճութեամբ թշնամեաց հանդէպ, առնական ժուժկալութեամբ շուայտութեանց ու զգայական հեշտութեանց դէմ: Անձնիշխան էք, տէր եղէ՛ք ձեր անձին, վեր՝ գծուծ պահանջներէ, շահագէտ քսութիւններէ, թուլահոգի ցանկութիւններէ, ազաա՝ կրքի ստիպումէն, բռնարարիչ հարկէն:

Ձեմ ուզեր կանխել ուրիշ բանախօսութեան մը նիւթը աւելի երկարելով. հարկ է վերջ տամ այս անգամ: Խնայեցէ՛ք, կ'ըսէր Դաւիթ որդեգորով ողորմաօք, խնայեցէ՛ք Աբիսողոմին, որ ապստամբած էր հօրը դէմ

և անոր զահր կ'ուզէր յափշտակել դաւաճան պատերազմով: Դիւցազն հայր, որ իրաւանց արդար պաշտպանութեանը մէջ չափաւորութիւնը չի մոռնար: Այլ աւա՛ղ, քիչ վերջը կը հասնի Յովնաթան հաւատարիմ զօրապետը, աւետիս մը տալու շտապով. Աբիսողոմ նետի մը հարուածով սպանուած էր՝ երբ թաւ անտառէ մը անցնելով իր պաշտօն, խնամած երկայն մագերիովն ծառէ մը կախուած էր. նետ մըն ալ հօրը կ'ըլլայ այս գոյժը և կարեւոր կ'ողբայ իր զաւակը. «Աբիսողոմ որդեա՛կ իմ, որդեա՛կ իմ Աբիսողոմ»: Կեցէ՛ք այս պատկերին առջեւ. հայր մը որ ի՛ողբայ իր զաւակը մագերիէն կախուած ու սպանուած. չէ՞ք տեսներ չար ազատութեան զոհը: Մազը որ իր ճամուկ ցլուածութեամբ ամէն մայրառի հետ կնճռելու չափ թոյլ և արձակ ձգուած է, թոյլ, մեղկ, կնոջական ազատութիւնն է որ ամէն կրքի հետ կը հանգուցուի և քանի՛ հայրեր, աւա՛ղ, կ'ողբան իրենց զաւակները զոհ իրենց ազատականութեան, ազատութեան զեղծումի: Հայրե՛ր, զգուշացէ՛ք ձեր զաւակաց ընթացքին. որդի՛ք, պատկա՛ռ եղէ՛ք ազատութեան սահմաններուն և պատուած պիտի ըլլաք զազատութիւնը և պիտի փրկէք զայն առաքինաբար:

ՓՈՂ

(Շարունակելի)

ՀԻՆ ԱՐԺԵՒԱԽՈՐ ՎԱԽԵՐԱԹՈՒՂԹԵՐ

ՆԱՄԱԿ ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒ ԱՌԱՋՈՅ
ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՌ Ս. ՔԱՎԱՆԱՅԱՊԵՏ ԻՆՈՎԵՆԵՏԻՈՍ Դ.

(Շար.)

Ձի առանց սերման յանապական կուսէ էր ծնունդն, և կատարումն անապական զի մարմին նորա ի գերեզմանին ոչ ետես զապականութիւն, հարկ է զի և ի մէջ ժամանակին որ ընդ ծնունդն է և ընդ մահն լիւնել անապական: Ոչ ի հարկաւոր և ի կա-

մաւոր կրիցն ասեմք զոչ անապական այսինքն քաղցոյ և ծարաւոյ, ննջելոյ և վաստակելոյ, արամելոյ և արտասուելոյ, որք ճշմարիտ և ոչ առ աչօք տան իմանալ մեզ զանապականութիւն: Զի էր ինչ ի նմա նման մերումս. և էր որ ի վեր քան զմերս. ըստ գրեցելումն թէ մարդ՝ և ի վեր քան զմարդ: Եւ թէ մարդ է՝ և ո՞ ծանիցէ զնա: Արդ ըստ մերում հասանելոյ՝ այսպէս եղեալ միաւորութեան յեղանակ յարգանդի կուսին, բնակելով ի նմա իննամեան ժամանակաւ՝ հինգ յաւելեալ աւուրբք ըստ անդրանկութեան: Եւ այն՝ որ կարողն էր ի միում վայրկենի լինել կատարեալ, օր ըստ օրէ աճամբ զարգանայ. որպէս զի խափանեցի այսոքիւք առ աչօք կարծելն զմարդկութիւն: Եւ ծնանի որպէս մարդ, Աստուած մարդացեալ զկուսութիւն ծնողին անապական պահելով: Զի և զծնունդն օրհնեացէ յանիծիցն, և զկուսութիւն նախապատուեացէ: Թշխատեցաւ ութօրեայ. զի զուխան որ ընդ հարան կատարեցէ, և մեզ ուսուցէ զթշխատութիւն սրտի հոգեւորապէս, եկն ի տաճարն քառասնօրեայ ըստ օրինացն յընծայումն, զի զմարդկային բնութիւնս ինքեամք ընծայեացէ հօր ի բարձունս: Փախեաւ յեգիպտոս՝ զի զմայրաքաղաք կռապաշտութեան դարձուցէ յաստուածապաշտութիւն. և զմեզ խրատեցէ յօթարութեամբ փախչել ընդ նմա հաւածանօք: Երջեցաւ յաշխարհի ամս երեսուն աղքատութեամբ և խոնարհութեամբ, ծածկելով զաստուածութիւն, զի զմեզ ճոխացուցեալ բարձրացուցէ յորժամ նորին ճանապարհին լինիմք հետեւողք: Եկն ի Յորդանան ի լրումն երեսնից ամաց յայտնելով զփառս աստուածութեան իւրոյ՝ վկայութեամբ հօր եթէ զա է որդի իմ սիրելի, և Սուրբ Հոգւոյն աղանակեալ իջմամբ: Մկրտեցաւ ի Յովհաննէ զի զջուրն սրբեացէ, և զհնութիւն սեղացն ընկղմեցէ ի նմա և զհոգեւորական տացէ մեզ զմկրտութիւն ըստ վկայելոյն Յովհաննու թէ նա մկրտեացէ զձեզ ի Հոգի Սուրբ և ի հուր: Պահեաց քառասնօրեայ աւուրբք երկրորդ Ագամ, վասն առաջնոյն Աղամայ, զի ոչ պահեսց և յաղ-

թեաց երիւք փորձութեամբքն յաղթողին մարդկան:

Եւ յետ այնորիկ ապա զծածուկ աստուածութեան իւրոյ զօրութիւն յայտնէ օտար աշխարհի՝ զդեւս հալածելով, զհիւանդս բժշկելով, զկաղս գնացուցանելով, զմեռեալս յարուցանելով, ի ծովու որպէս ի ցամաքի գնալով, ի սակաւ հացից զբազումս կերակրելով, զբնութիւն արարածոց որպէս կամէր փոփոխելով, զջուրն ի գինի և զկաւն ի լոյս դարձուցանելով: Եւ զլոյս աստուածութեան իւրոյ զծածկեալն իբրեւ վարագուրաւ ընդ մարմնոյն՝ յայտնեաց աշակերտացն իւրոց ի Թափօրական լերինն նախ քան զյարութիւն: Տէր զինքն ծանուցանելով կենդանեաց և մեռելոց իշխանաբար կոչմամբն Մովսիսի և Եղիայի, Գայ այնուհետեւ կամաւորաբար յերուսաղէմ ի չարչարանս, զի զգիրս օրինաց և մարգարէից լցցէ: Նստի ի վերայ իշոյ և յաւանակի յօրինակ եկեղեցւոյ Հրէից և հեթանոսաց: Կատարէ զՋատիկն ըստ օրինացն զի զհինն ի նորս, և զստուերն ի ճշմարտութիւնս փոխեացէ: Լուանայ զոռոս աշակերտացն, զի զնախահօրն ոտից որ ի ծանն գիտութեան ընթացից, մաքրեցէ զյանցանս: Տայ զմարմնն իւր կերակուր կենաց և զարիւն իւր ի քաւութիւն մեղաց, զի որք առաջին պտղոյն ճաշակմամբ մահացաք, զայսոսիկ ճաշակելովն՝ կենդանասցուք: Այլթէ իմով բնութեամբ առ Հայր վասն իմ, զի յառաջինն դարձուցէ ի փառս, և զի սացէ օրինակ յաղթել և մեզ ի փորձութեան իւրում: Տրամեցաւ և արտասուեաց ուրախութեան պատճառն երկնաւորաց և երկրաւորաց. զի բարձցէ զամենայն արտօսր յամենայն երեսաց ըստ Եսայեայ: Երկեաւ զի զերկիւղն լուծցէ զմահու: Իբրանցաւ զի զքիթսն երեսացն ջնջուցէ: Ապտակեցաւ զի հարցէ ուժգին զթշնամին: Մերկացաւ՝ զի զամօթոյ ծածկոյթ նախահօրն պատուեացէ: Էարբ զլեզուն, զի զգառն մեղայն ճաշակն քաղցրացուցէ: Բեւեռեցաւ ի խաչին զի զմեզ արձակեցէ ի հաւածանաց մեղաց, և չնորհեցէ փայտ կենաց փոխանակ փայտին մահու: Մեռաւ իշխանա-

բար մարդկային մահկանացու բնութեամբս ,
և միաց կենդանի աստուածային անմահական
բնութեամբն , ո՛չ ոմն մեռեալ և ոմն կեն-
դանի ըստ բաժանողացն , այլ միենոյն անձ-
նաւորութիւն և մի Բրիստոսն , չարչարէր և
մեռանէր մահկանացու մարմնովն որ ի մէջ ,
և կենդանի էր անմահ և կենդանաբար աստ-
ուածութեամբն որ ի Հօրէ : Որպէս և Սուրբն
Աթանաս ասէ . «Թէ մահկանացու մարմինն
«ոչ վնասեաց զանմահ աստուածութիւնն ,
«քանզի անախտ էր , այլ միաց մանաւանդ
«և ինքն անախտ անմահին զօրութեամբ» :
Եւ յետ սակաւուց ասէ . «Թէ մահ մարմնոյն
«եղեւ համագոյակցին մահկանացուացս : Վասն
«որոյ և մի ք խոստովանիմք Աստուած եւ
«մարդ զԲրիստոս : Ոչ բաժանելոյ ալապաւ
«զայս ասեմ . մի՛ լիցի . զի նա ինքն է չար-
«չարեալ , և ո՛չ չարչարեալ : Աստուածային
«բնութեամբն անփոփոխելի և անչարչարելի ,
«իսկ մարմնովն չարչարեալ և զմահ ճաշա-
«կեալ : Յազագս որոյ մոլորին որք ասենն թէ
«այլ ոմն է որ չարչարեցաւ և այլ ոմն որ ոչ
«չարչարեցաւ : Բայց ոչ այլ ոք է քան զբանն
«որ չարչարեցաւ և զմահ ընկալաւ մարմնովն
«զի նոյն ինքն անչարչարելի և անմարմին
«բանն լինել մարմին և չարչարելի յանձն
«էառ . զի չարչարանօք փրկեացէ զմարդիկ :
«Քանզի զոր ինչ մարդկեղէնն չարչարիւր
«մարմին բանին՝ զայս ընդ նմին գոլով բանն
«յինքն վերաբերէր , և լինէր յոյժ հրաշափա-
«ռագոյն իր . զի ինքն էր որ չարչարիւր և
«ինքն էր որ ոչ չարչարիւր : Չարչարիւր չար-
«չարեալն , զի իւր ինքեան չարչարիւր մար-
«մին , և ի նմին ի չարչարելունն , էր ինքն
«առանց չարչարանաց , անբաժանելի ի չար-
«չարեցելոյ մարմնոյն : Զի Աստուած գոլով
«բանն՝ անչարչարելի էր բնութեամբ . սակայն
«ընդ չարչարելի մարմնոյն տնտաժանելի միտ-
«ցեալ անմարմինն : Եւ մարմինն ունելով
«յինքեան զանչարչարելի բանն , ջնջիչ տկա-
«քութեան իւրոյ» :

(Շարունակելի)

„ՅԱԼՕ“

Հէր նէ գատար տա Յալօ բէք ֆէնա պիր
զազէթա իտի իսէտէ , պիզիմ Մ . Ֆիշ եինէ
ծնր ալըրտը :

— Նէ՛ , հիշ պիր շէյ ա՛նլամամալը մը ,
անվալը ալէմոէն խապէրտար օլմամալը մը :

Շու հալտէ Ֆիշ ինտինտէ , Յալօ օճիվա-
րըն էն չօգ հալատիս վէրէն կազէթաարյար :
Օն բարայա ալթը սահիֆէ վէ իսթէտիյին
գատար տա հալատիս . . . ալմագմալըն :
Բուհպան շէքըլիքլէրինն քեաֆֆէսի տէ
հէր պիր թէֆէրրուաթըյա օրտտա միւնտէ-
րիճ իտի : Սայքի հէր սահիֆէտէ Բիլիսանըն
պիր բարչաաը շէքիշտիրիմէքաէ . պիր Ֆրէր
վէ եա Սեօրիւն էթի չիյնէնմէքտէ իտի :

Գօմշուլարը պուլընան էյի գարըլար , պու
եարաղընըն էյի օլմաաղըլըն Ֆիշէ իխթար
իտէրլէրտի :

— Որւսիւ Ֆիշ , պու ֆէնա կազէթայը
ալմագլա բէք ֆէնա պիր շէյ եաբըյօրսըն . . .
Ալլահ սանա ճէզա վէրիւր . . . ! տէրլէրտի :

Ֆիշ . ֆիլվապը պուլըն պէօյլէ օլտուղընա
ինանըրաը , չիւնքի բէք էյի պիր վալիսէյէ
մալիք օլմուշ վէ օ սայէտէ տէ զայէթ էյի
պիր թէրպիյէ կէօրմիւշ լտի . . . լաքին ճէսա-
րէթի եօզ իտի :

— Գարտաշ , գաթօլիք կազէթալարը-
նըն տա հիշ պիր ճաղիպէսի եօք տըր . . .
Լա Բրուս ճէրիտէսինի օգուտուղըմաս , ա-
տէթա պիր սապօն բարչաաը եէյօր կիպի օ-
լույօրըմ , ճէվապըյա մուգապէլէ իտէրտի :

Ֆիշին գարըլար տա օ կազէթանըն բօմանը-
նը բէք միւշթագգանէ օգուտը վէ Ֆիշ էվին
իչինտէ հիւսնի անէնկին իտամէսի իչուն սէս
չըգարմազ վէ հէր կիւն իշտէն ալտէթինտէ
եուվարլազ պիր օնուզ վէրիւր վէ , թազէ
միւրէքքէպին գօգուսը հէնուզ իւսթիւնտէ օ-
լան Յալօտան պիր տանէ ալըրտը :

*
* *

Մա մաֆիյն , արա սըրա վէ խուսուսըյա
մէրտիվէնտէ գարըլարա թէսաաիւֆ էյլէտիյի

սրբատա , իզթիրապը վիճառն Թիշին գալպի-
նի տէլէրաթի . . . վէ էվէ տէճնաթիւլիւնտէ գէ-
հիրլէ տօլու պիր շիշէ կէթիրիյօր կիպի օ-
լուրտը :

Պիր կիւն պու գօրգուսընր գարըսընա տա
աչար , վէ

— Պիզ պու կազէթայը օգուճագլա ֆէ-
նալըզ եաբըյօրըզ , տէր :

Գարըսը կէօզլէրինի աչարագ ,

— Ֆէնալըզ մը , քիմէ : Սէն պիր էր-
քէք օլաուզըն իչուն , հէր հալտէ սանա օլ-
մուշ օլմամալը : Պէն տէ եաշըմը ալմըշ օլ-
աուզըմաւան վէ հայաթը թանրաղըմաւան ,
պու ֆէնալըզ պէնիմ իչուն տէ տէյիլ տիր :
Շուրաւաա Ֆալօնըն ֆէնալըզ եաբապիլէճէյի
պիրի վարաա , օ տա , հիւուզ 12 եաշընտա
պուլընան Բընէ օլըմըզ օլմալը տըր : Եօզ ,
օ հէր շէյի պիլմէմէլի տիր , տէր :

— Տէմէք կազէթամըղը թէրք իթմէյէ-
լիմ . . . Ֆազաթ Բընէյէ տէ վէրմէմէլի :

— Օհ , էմին օլունըզ քի Բընէ պու կա-
զէթայը աալա կէօրմէյէճէք : Սահիհ տիր քի
պազէն էլիմաէ կէօրիւր , լաքին հիչ պիր վա-
զըթ օգուճագ :

— Պունա էմին մի սին :

— Բէք էմինիմ , չիւնքի պէն հէր տէֆա
Ֆալօյը տօլապա սապլարըմ վէ աթէշ եագ .
տըլըմտա օրատան պիր տանէ ալըրըմ :

— Շու հալտէ միւսթէրիյի օլապիլիլիլզ
տէմէք տիր :

— Էլպէթթէ . . .

Պունըն իւզէրինէ Ֆալօ միւնիթաղամէն
հէր ազշամ Թիշ ալիլէսինի գուլմէթիլլէ տօլ-
աուրըրտը : Օնլարըն ֆիքրի օ տէրէճէ մուզ-
լիմ պիր հալէ կէլիրաի քի հագիգաթըն չիւ-
լէլէրի օրայա նուֆուզ իտէմէզլէրաի :

Պիր եալընըզ քիւշիւք Բընէ Ֆալօնըն
աուլի թէսիրինտէն մաուուն գալըյօրտը :

Մատամ Թիշ , էվ իշլէրինտէն խալի գալ-
աուրը սըրալարաա իւթիւ եաբարտը , օլաուզ-
ճա միւշթէրիլէրի տէ վար իտի :

Պիր Բէնշէնպիհ կիւնիւ էօյլէնտէն սօնրա
Բընէնին մէքթէպի եօղալ : Էվտէ վապիֆէ-
լէրինի իքմալ իթտիքտէն սօնրա , պիր վա-
բօր եաբմագ իչուն աղաճ բարշալարըլլա

աւըրաշըյօրտը : Չօճուզըն էլ իշլէրինէ բէք
հէվէսիլ օլաուզընտան , էպէվէսի ալթը այ
սօնրա ծնը պիր մաքինիսթ հանընա գօմագ
թէսապվուրընտա պուլընըյօրլարտը :

Վալիտէսի ծնը չաղըրըր ,

— Նէ տիր , վալիտէ :

— Պիր գաշ միւսթաճէլ եագալար վար-
տը , ծնլարը պիթիրտիմ , ա'լ պունլարը վէ
Գուրպէ սօգաղընըն եօգարը թարաֆընտապի
Մ . Մինէյէ կէօթիւր : Պիլիւրսին , տէյիլ մի :

— Պիլմէմ , ֆագաթ ալզըմտա պիր տի-
լիմ վար :

Վալիտէսի , պու թէմիզլէնմիշ , իւթիւ-
լէնմիշ բարլագ եագալարըն գութուսընը ա-
լըր : Բընէ գութուշը ալմագ իւզրէ քիլիլճէ
էլինի ուզաթաղընտա ,

— Սէն պու քիրլի բարմագլարընլա հէր
շէյի պէրալաա իտէճէքսին : Տու'ր , չու գու-
թուշը պիր շէյէ սարալըմ :

Արգասընտաքի , տայիմա իշլէսիլի վա-
զըթ նիմ աշըք օլան տօլապտան պիր կազէ-
թա իլէ պիր բարշա տա սիճիմ չըգարըր , վէ
գասընլարա մաիսուսա պիր մէհարէթլէ կիւզէլ
պիր բաքէթ եաբար :

— Ալ շիմաի , ճիկէրբարէմ , տէր , վէ չօ-
ճուզը տէրաղուշ էյլէր :

Բընէ գասթէթիլի ալըր , մէրալվէնտէն
սըշլալարագ էնէր , հէման սօգագա աթըլըր :

* *

Չօճուզ էվվէլ էմիրտէ մաղաղալարը սէյր
իտէր , սօնրա մաղաղալարաան օսանընճա կէ-
լիպ կիտէնլէրի թէմաշայա սալար :

Պիրտէն պիրէ բաքէթի պիր էլինտէն օ
պիրինէ կէշիրաիլի վազըթ իրի օագըլարլա ,
Բաթիալլարըն վէ Սօսիալիսթիլի

մեցՖաաթընա հաթիմ

Ֆալօ կազէբաւը

իպարէլէրինի կէօրիւր :

— Եաշասըն , իշթէ բէտէր վէ վալիտէնին
կազէթատը . . . Գաշարճա տէֆա պունը օ-
գուճագ իսթէտիմ . միւսատտէ իթմէտիլէր ,
պիլմէմ քի հիքմէթի նէ տիր :

Եագա բաքէթիլի էլլէրինէ ալարագ կէօզ-
լէրինէ սօզրու հագաշալարըր : Իլք պէնա ,

աւելարհական մեքէպի միւսաճաաւ սէրլէվ-
հալը իտի: Պու մէգալէտէ եպիսկոպոսարա,
Բաբայա, գաթօլիքէրէ մէհաճիմաթաա պու-
լընըլըյօրաւ: Կէօյա, պուճար տար Ֆիքիլի
քիմէլէր իմրչէր, Ֆրանսատա հիւրիյէթի
վիճառնը մահվ իթմէք, թէրապզըր մէն էյ-
լէմէք, թըյրանը Ֆիքրէ գարչը սէտտչէքմէք
իսթէյօրլարմըչ... Պիր էճնէպիին մէմուրլա-
րը օլան վէ մէմլէքէթիմիգտէ իսեան թէհիյէ
էլէյէն ժողովրդապետէր հապքընտա հիւքիւ-
մէթ քէնտի վաղիֆէսինի եաքաճազմըչ...

(Մապաի վար)

ԼՈՒԻ ՎԷՅԵՆՅԻ ՀԱՐԻԻՐԱՄԵԱԿԸ

Պիոս Ժ. Մըքազան Բահանայապէսը Մ.
Յրանտա Վէյեոյի ուղղեր Ե հետեւեալ առա-
ջնական ք լոյրը.

«Մեծ հաճութեամբ ընդունեցանք Լուի
Վէյեոյի ձեր հօրեղբոր կենսագրութեան վեր-
ջին մասը զոր մեզի ընծայած էիք. եւ բոլոր
սրտանց ինդակից կնք ձեզի որ յաջողու-
թեամբ աւարտեցիք այդ ծանրակշիռ գործը,
զոր ձեր պատուարժան հայրը թերի թողած
էր:

Ձեր գեղեցիկ աշխատասիրութեան հրա-
տարակումը աւելի պատեհ ժամանակ մը
չէր կրնար տեղի ունենալ, քանի որ այն կը
կանխէ քիչ մը նշանաւոր թուականը ծննդ-
եան հարիւրամիակին այն կաթողիկէ հոյա-
կապ հրապարակագրին, որուն անունը այլեւս
փառաւորապէս զրօշմուած է պատմութեան
մէջ:

Հետեւելով օրինակին երկու Բահանայա-
պետներու, որ մեզմէ առաջ լազմեցան այս
Առաքելական Աթոռին վրայ, և գլխաւորա-
բար սրբայիշատակ Պիոս Թ. ի, հաճելի է մե-
զի մեծարել այս մեծ մարդը, Աստուծոյ եւ
Եկեղեցւոյ իրաւանց անվահեր պաշտպանը:

Ասպարէզ մտաւ՝ առաքելական եռան-
գով լոյսավառուած՝ և զարդարուած այն
թանկագին ձիրքերով որ մատենագրի, ար-
ուեստագէտի և հանճարի մը կազմել է հանգա-

մանքներն են. որոնցմով ինք հաւատարեցաւ
ամենէն հռչակաւոր պրագէտներու և զանոնք
գլեց անցաւ, որովհետեւ նուիրական լակըզ-
բունքներու պաշտպանութեան սուրբ պատե-
րագմներուն մէջ, իր գրիչը հասու սուր մըն
էր և միանգամայն լուսատու լապտերմը: Իր
մտքին ուժգնութիւն և թափ սուղը, զայն
լոյսով պարուրողը, անոր կորովը հարիւրա-
պատկողը, իր խորին հաւատքին հետ սէրն
էր Եկեղեցւոյ, որուն յաղթանակելը կը բաղ-
ձար, սէրն էր իր հայրենեաց, որուն Աստու-
ծոյ հաւատարիմ ըլլալը կ'ողգէր:

Առաջնորդուած այս հաւատքէն, տոգոր-
ուած այս կրկին սիրով կրցաւ իրբեւ ամ-
բարշտութիւն մերժել ինչ որ կը նուազեցնէ
Յիսուսի Բրիստոսի գերագոյն իշխանութիւնը
և կը մնասէ Առաքելական Գահին վարդապե-
տութեանց:

Հասկցաւ որ ընկերութեանց ուժն է լիո-
վին ճանչնալ մեր տիրոջ ընկերական թափա-
ւորութիւնը և անվերապահօրէն ընդունիլ իր
եկեղեցւոյն վարդապետական գերիշխանու-
թիւնը:

Ինչ արդարակորով և խորիստ հոգեով,
ինչ աննուաճ սրտով լսելի ըրաւ, այս հիմ-
նական հարցերու մասին, ամենէն արիական
յայտարարութիւններ, աներկմիս, անթերի
գաւանդելով կաթողիկէ ճշմարտութիւնը. չու-
ղելով բնաւ զանազանութիւն դնել արդի
աշխարհի ընդունած կամ մերժելու յաւակ-
նած իրաւունքներու միջեւ: Ինչ վսեմ հա-
մարձակութեամբ կրցաւ գիմակազերծ ընել ա-
զատութեան անուան տակ կեղծ ու պատիր
իմաստակութիւններով պարուրուած այնքան
աղէտալի պատամտական տեսութիւններ:

Համոզուած ըլլալով թէ այն ազգը որ
գարեթէ ի վեր Եկեղեցւոյ երէց դուստր կը
կոչուի իր հաւատքէն, իր հանճարէն, իր
պատմութեան տրամաբանութենէն կը պար-
տաւորուի ճանչնալ լիովին Ս. Աթոռին ի-
րաւունքները և Հռոմի Բահանայապետին իշ-
խանութիւնը, ջանաց իր հոգւոյն բովանդակ
եռանդովը փարատել Կալլիպանիզմի բոլոր
նախապաշարութիւնները եւ երկզմութիւնները,
և ուժգնօրէն մղուած սուաւ զէպի առաքե-

լական ամբողջ տեղի ունեցող շարժումին, որով նշանաւոր եղաւ իր դարը: Ոչ ոք կ'անգիտանայ նոյն յարատեւութիւնը որով միշտ ընդդիմացաւ այն ապականեալ մտքերուն դէմ որոնք կը յարձակէին իր հայրենիքին ոյժն ու փառքը եղող քրիստոնէական աւանդութեանց կենդանի աղբիւրներուն վրայ:

Անշուշտ մեծ փառք մըն է Եկեղեցւոյ մէկ ծառային համար, գրեթէ կէս դար, աշխարհիս մէջ յաջորդաբար տեղի ունեցող դէպքերուն վրայ պիտի կաթողիկէ Եկեղեցւոյ վարդապետութեան ջինջ լոյսը, և անդու, անխնայ հալածիլ թէ՛ անպատկառ և թէ՛ ըստուերասող մոլորութիւնը: Իրեն փառք եւ պատիւ է որ այս ամէնը ըրաւ քաջութեամբ, աշխոյժով և իմանալառութեամբ մարդու մը որ կը ժառանգէ ճշմարտութիւնը և գիտէ թէ այդ ճշմարտութիւնը աննախագրելի իրաւունքներ ունի: Իրեն փառք և պատիւ է որ այս ամէնը ըրաւ հնազանդութեամբ և բարեկարգութեամբ, աչքը սեւեռած Ս. Աթոռին հրահանգներուն վրայ: Իրեն փառք եւ պատիւ է որ այս ամէնը ըրաւ կատարեալ անշահասիրութեամբ, տեղի չտալով երբեք հրապոյրներու, զովհասներու, խոստումներու առջեւ, ընդունելով անժողովրդակաւնութիւնը, նենգամտութիւնները, հակակրօնութիւնները, իր հակառակորդներուն տարապարտ ամբաստանութիւնները, երբեմն նոյն իսկ իր զէնքի ընկերներուն խոստումները, ու «բախանալով Յիսուսի անուան համար արհամարուելու արժանի ըլլալուն համար» (Գործ. Ե. 47):

Իր ամբողջ հոյակապ կեանքը արժանի է ներկայացուելու իբրեւ օրինակ անոնց որ Եկեղեցւոյ եւ նուիրական դատերու համար կը կոռնին, և նշաւակ են միեւնոյն հակառակութեանց, կրքի միեւնոյն գրգռութեանց: Լուի Վէօյետի պէս իրենց պարծանք թող համարին քրիստոնեայ եւ եկեղեցւոյ ծառայ ըլլալին: Թող գիտնան թէ Աստուած իրենց հետ միասին պիտի պատերազմի և իր նախախնամութեան որոշած ժամանակին իրենց յաղթութիւն պիտի պարգևէ:

Հաւատեօք մեր լիալիր հաճութեան կու տանք, ամենասիրելի որդեակ, իրեւ գրաւական երկնային շնորհաց, ձեզի և ձեր ընտանեաց բոլոր անգամներուն Լուի Վէօյետի բոլոր զաւակներուն մեր առաքելական օրհնութիւնը:

Տուեալ է Հոռմ, Ս. Պետրոսի մօտ, 1913 Հոկտեմբեր 22ին, Մեր Քահանայապետութեան տանը մէկերորդ տարին:

ՊԻՈՍ ՔԱՀԱՆԱԹԱՊԵՏ Ժ.

ԻՆՔՆԱԳԻՐ ՏԱՊԱՆԱԳԻՐ ԼՈՒՆՎԵԼՈՒԹՅԱՆ

Քաջ դրէք գրիչս,
Ճակքիս վրայ՝ գրիչսոս, իմ պարծանքս,
Ոսկերուս ճակ դրէ՛ք այս հուռոր:
Եւ զամեցէ՛ք դազադս խաղաղութեամբ:

Վերջին աղօթքէն յետոյ
Փոսիս վրայ ցնկեցէ՛ք խաչը,
Եւ եթէ ինձի քաւ մը տուի,
Վրան դրուեցէ՛ք. Հաւատացի, կը տեսնեմ:

Իբրեւ թէ՛. «կը ննջէ,
Իր խիս աւխասանքը վերջացաւ»:
Կամ մանաւանդ թէ՛. «կ'արթննայ,
Կը տեսնէ ինչ որ այնչափ երազեց»:

Իմ յիշատակս մի՛ պաշտպանէ՛ք,
Եթէ տեսնուիք վրաս յարձակի:
Ես գոհ եմ, յաղթուիք իմս է.
Բարո՛ւք պատերազմը պատերազմեցայ:

Վաս խաժառնգներ
Փակած են անունիս.
Թողէ՛ք գիրենք. այս խոցերը
Թերեւս ծածկեն իմ մեղքերս:

Աւխասալի կռուիս մէջ
Հաւատքի կազդուրեց սիրագրաւ սիրս.
Ուսի անցուցի երջանիկ կեանք մը,
Քանի որ վերջապէս միշտ սիրեցի:

Մեղաւոր եղայ եւ ճամբուս վրայ
Աւաղ, սէպ դեպի եցայ.
Բայց, զոհուի՛ր և Աստուծոյ, յաղթեցի տարակոյսին
Մեռայ անյողողող եւ ապաշխարող:

Կը յուսամ ի Յիսուս: Երկրի վրայ
Իր օրէնքէն չբիկնեցայ,
Վերջին օրը, նա՛ իր Հօրն առչելու
Խնամէ պիտի չբիկնի:

ԵՐԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵՒ

ՏՕՆԱՅՈՅՑ

- Դեկտեմբեր 7 + Կիր. ԿԿ. Դ. Յիսնակաց, Ս. Յակոբայ
բարեկենդան :
- 8 ԴՂ. ԳՃ. Եւսուասիոսի, Աւսեմեփո-
սի, Եւզեմիոսի, Ովրեստէսի
Եւ Մարգարիոսի :
- 9 + ԴՂ. ԳԿ. Անարաս Յղութիւն Ս. Աւս-
ուածածնի :
- 10 ԴՂ. ԴՃ. Պանոնց :
- 11 ԵՂ. ԴԿ. Իգնասիոս աստուածազգեաց
Հայրապետի : Եւ Թէոպոմ-
պայ Եպիսկ.ին Եւ Թէոփնայ
վկային Եւ չորից զինուո-
րացն :
- 12 Ուրբ. ամ. Պանոնց :
- 13 Եր. ակ. Ս. Յակոբայ Մծբնայ Հայ-
րապետին, Եւ Մարուգէի
նգնաւորին :

Ս. ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵՐԵՐՈՆ ՀԱՅՐԱՊԵՏ

(Եւր.)

Ս. Հայրապետը մեծապէս հոգ կը տանէր հա-
ւատոյ ծաւալման՝ Հռոմայեցւոց անբուժեան ալիւ-
այլ կողմերը եպիսկոպոսներ և քահանաներ զրկելով,
հեթանոսաց սահմաններուն մէջ գտնուող եպիսկոպոս-
ներուն ամէն տեսակ օգնութիւններ ընելով։ Արքունի
հրամանաւ փակել տուաւ Փապա քաղքին հեթանո-
սաց մէհեաներ։

Անտիոքի մէջ քնացած երկպառակութիւններուն
ալ վերջ տուաւ տեղւոյն եպիսկոպոսները Փարբիանոս
Հայրապետին հետ հաշտեցնելով և վաշի Հռոմայ Ա-
թոռին ընդունելի ընելով։

Եկեղեցիներն ու վկայարաններն ալ պայծառա-
ցնելու ջանաց. և ժողովելով մի քանի նշխարներ, ու-
րանց մէջէն յատկապէս կը յիշուի Ս. Փոկասինը, ամ-
փոփեց վանսք վայելուչ տեղ մը։ Երբ հանդիսական
թափօրով քաղքին մեծ եկեղեցիէն սրբոց նշխարնարը
փոխադրեց նորաշէն Ս. Թովմայի տաճարը որ կը գլու-
նուէր ծովեզերքը՝ այժմ Թարապիտ կոչուած տեղը,
տաշի օր ներկայ եղաւ Եւդոքսիա թագուհին և երկ-
րորդ օրը Արկադիոս թագաւորը. ուստի նոյն օրերը
խօսած քարոզներուն մէջ գովեց թագաւորին և թա-
գուհւոյն բարեպաշտութիւնը։

399ին Եւստրակիոս ներքինապետը հիւպատոսու-
թեան աստիճանին բարձրացաւ և սկսաւ օրէ օր ամ-
բարտաւանիլ և եկեղեցւոյ և թագաւորին հրամա-
նաց անսաստել։ Ոսկերեան իրեւ բարեկամ շատ
խրատեց Եւստրակիոսը, բայց սա մտիկ չըրաւ և յան-
դգնեցաւ Եկեղեցւոյ աղատութեան հակառակ օրէնք

ևս գնել, սահմանելով որ եկեղեցին ապաւինող յան-
ցաւորը ազատ չըլլայ, այլ բռնի դուրս հանուի և
պատժուի։ Սակայն քիչ ետքը ինքը կարօտ եղաւ Ե-
կեղեցւոյ, որովհետեւ քրէական յանցանքի մէջ բրա-
նուելով պաշտօնանկ եղաւ և Կիպրոս աքսորուելու
դատաւարաւեցաւ։ Ինքը այս բանս լսելուն պէս
զաղաւակ եղաւ պալատէն և Մայր եկեղեցին ելծալով
Ս. Հայրապետին գլխով ետն ապաստանեցաւ։ Ոսկերե-
ան սիրով ընդունեցաւ և պաւստանեց զինքը թագա-
ւորին ապաստաններուն դէմ որ եկան զինքը եկեղե-
ցիէն բռնութեամբ հանելու։ Բայց երբ Եւստրակիոս
փորձեց եկեղեցիէն ուրիշ տեղ փախչիլ՝ բռնուեցաւ և
աքսորուեցաւ։

Նոյն օրերը Կ. պոլիս եկան քանդակու տախտի
եպիսկոպոսներ և գրով ու խօսքով ամբաստանեցին
Ոսկերեանին առջեւ Եփեսացւոց Անտոնիոս եպիսկո-
պոսը մեծամեծ յանցանքներուն համար։ Եւ որովհե-
տեւ այն միջոցին ամբաստանեալը մեռաւ, Ոսկերե-
ան իշխող եպիսկոպոսներու հետ եղաւ Եփեսոս գը-
նաց ուր ուրիշներ ալ գալով եպիսկոպոսներուն թիւը
բարձրացաւ եօթանասունի։ Ոսկերեան ժողով գու-
մարելով Եփեսոսի եպիսկոպոս կարգեց Հերակղիթէսը,
սիմոնական վեց եպիսկոպոս պաշտօնանկ ըրաւ և ա-
նոց տեղ ուրիշներ դրաւ։ Առաջնորդներու միջեւ ե-
զած ալիւայլ հակառակութիւններուն ալ վերջ
տուաւ։

Երբ Ոսկերեան Կ. Պոլիս դարձաւ շատ մեծ խան-
գալաւորութեամբ ընդունուեցաւ թագաւորին և ամ-
բողջ ժողովուրդին կողմէ. բայց շատ չանցաւ։ Ոսկե-
րեանի դէմ ծագեցաւ խռովութիւն մը, որուն շատ
ուժ տուաւ Եւդոքսիա թագուհին։ Ասիկայ իր անի-
բաւութեանց համար Ս. Հայրապետէն յանդիմանուած
ըլլալով՝ անոր դէմ սխալալուծեամբ և ատելութեամբ
լեցուած էր. ուստի ամէն կերպով ջանաց զանիկայ
հարուածելու և մեղքիխառք իր կողմը շահեցաւ շատ
երեւելի և առաքինի եպիսկոպոսներ ալ։

Ոսկերեանին ստիճաններուն գլուխ էր Աղեքսան-
դրիայի Թէոփիլոս Հայրապետը, որ թէեւ շատ ընտիր
և գովելի բարեմասնութիւններ ունէր, սակայն իրեն
հակառակորդ երեւցողներուն հետ ծայրայեղ խառու-
թեամբ կը վարուէր։ Ասիկայ որ, ինչպէս առաջ ըս-
ուեցաւ, Ոսկերեանին տեղ իր Իսիդորոս աշակերտը
կ'ուզէր Կ. Պոլսոյ Պատրիարք կարգել, մի քանի տա-
րի ետքը գփտեցաւ այս վերջինին հետ զրամական
խնդիրի մը համար։ Ասոր համար Իսիդորոս իր ծե-
րութեան ատեն անապատ գնաց և հոն կը ծուռայէր
Ակիտի մենակեացներուն։ Բայց Թէոփիլոս այնչափ
զուլայացած էր անոր դէմ որ անոր պատճառաւ սկը-
սաւ հալածել յիշեալ բոլոր մենակեացները ըսելով թէ
մէջերնին որոգիւնեաններ կան։ Ժողովի մը մէջ անոնց-
մէ չորսն ալ յանուանէ բանադրեց առանց հաւասար
քննութեան։ Եւ որովհետեւ նոյն միջոցին արեւելքի
մէջ Ս. Հերմիմոս ուժգնօրէն կը կռուէր և կը յաղ-

Թահարէր որոգիւնեաները, լսելով Թէոփիլոսի նախա-
նախորդութիւնը և անտեղեակ ըլլալով նոյնին շարժա-
ռիթներուն, ուրախակցութեան գիր գրեց անոր: Ս.
Հերոնիմոսի աջակից Կիպրոսի Եպիփանէ եպիսկոպոսն
այ նոյն գաղափարը ունէր Թէոփիլոսի մասին:

Թէոփիլոս իրեն համամիտ տեսնելով այսպիսի ե-
րեւելի անձեր, չափը անցուց և սկսաւ պարտաւոր-
ներուն հետ անպարաններն ալ հալածել անխտիր: Մե-
նակեացիները չկարենալով զիմանալ բազմութեամբ ե-
լան Պոլիս եկան Ոսկերեանին մօտ, որ զիրենք իրրեւ
սուրբ հայրեր սիրով ընդունեցաւ. բայց անոնց հետ
սուրբ Խորհուրդով հայորդակցելէ զգուշացաւ, քանի
որ չէր գիտեր անոնց հաշտութեան պատճառը: Ա-
յս Թէոփիլոսին թուղթ գրեց խնդրելով որ հաճի
մենակեացիները ընդունիլ և յայտնեց թէ հակառակ
պարագային՝ անոնք իր մասին ամբաստանութեան
գիր պիտի մատուցանեն: Թէոփիլոս խտրեւ պատաս-
խանեց ըսելով թէ Ոսկերեան իրաւունք չունի, ըսա-
վաւ Նիկիոյ Ժողովոյն՝ ուրիշի վիճակին խնդիրնե-
րուն մէջ մտնելու: Ոսկերեան տեսնելով թէ իր ա-
ռաջարկը չարաչար կերպով մեկնուեցաւ, ետ կեցաւ
Սկիտացիները իրենց պատրիարքին հետ հաշտեցնելէ և
զանոնք Եպիսկոպոս զրկեց որ երթան անձամբ անսր
հետ հաշտուին: Թէոփիլոս մի քանի զրպարաներէ
լուր առնելով թէ Ոսկերեան իրմէ բանադրուած մե-
նակեացիներուն հետ հողորդակցեր է, իր բոլոր բար-
կութիւնը անսր դէմ դարձուց և սկսաւ զանիկայ
պաշտօնանկ ընելու առիթ փնտաւր:

(Շարունակելի)

Հոգեւոր ՄՏԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ „ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ“ ԳՐԲԷՆ

Գրք. Ա. — Գլ. ԺԶ. — Ուրիշներու պաշտօնականաց համ-
բերելու վրայ:

(Շար.)

Կ'ուզենք որ ուրիշները իստի ուղղութիւն, բայց
մեկն ուղղութիւն չենք ուզեր:

Հաճելի չէ մեզ այլոց յափազանց ազատութիւնը,
եւ սակայն չենք ուզեր որ մեր խնդրածը զրացուի:

Կ'ուզենք որ ուրիշները կանոններով սեղմուին, սա-
կայն բացարձակապէս չենք հանդուրժեր որ մեզի սահ-
ման ու յափ սը դրուի:

Ասկէ յայտնի է ուղեմէ թէ՛ ո'րչափ ի՞նչ անգամ մեր
ընկերը կը նկատենք իրեն մեր սննդ:

Եթէ ամէկը կատարեալ չըլլայի, ան ասեմ իւրու-
ծոյ սիրոյն համար ուրիշներէն խելոյն ի՞նչ կ'ունենա-
յիմ:

ՄԵՆՈՒԹԻՒՆ Ս. ԱՌԵՏԱՐԱՆԻ

ՅԻՍՈՒՍԻ ՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Փրկչին Ս. Ծնունդը

(Գլ. Կ. Բ. 4—7)

(Շար.)

9. Այս Աւգոստոսի թուահամարին զը-
խահարկը ո'չ միայն էրիկ մարդոց, այլ ինչ-
պէս ըսինք, նաեւ կանանց համար պար-
տաւորիչ էր: Անոր համար էր որ Ս. Կոյսն
ալ ստիպուած եղաւ Ս. Յովսեփայ հետ միա-
սին ճամբորդել, մանաւանդ որ, ինչպէս Ս.
Հարք եւ մեկնիչք առ հասարակ կը վարդա-
պետին, առաջները գրիթէ անսովոր եղող
այդ թուահամարը այսչափ ընդհանուր կղա-
նակաւ ընողը ո'չ թէ Աւգոստոս էր, այլ
Աստուած որ զանիկա իրրեւ գործիք միայն
ձեռք առած, իր ամենիմաստուն Նախա-
խնամութեան գաղտնի խորհուրդները ըստ
յառաջագոյն կարգադրութեան կը յաջող-
ցնէր: Ընել տուաւ թուահամարը՝ որպէս զի
Մարիամ ալ երթար ի Բեթղեհէմ, որպէս զի
հոն ծնանէր Քրիստոս, որպէս զի մարգա-
րէին նախաապուլթիւնը ստուգուէր: Քանզի
Դաւիթ ալ, Քրիստոսի նախահայրը, հոն
ծնած էր. Հմմ. Ա. Թագ. ԺԶ. 1 եւ ԺԷ.
12: Եւ այս ա'յնքան կարեւոր էր, որ դեռ
հազիւ ծնած, իր ոստիկներն անգամ արիւ-
նարու Հերովդէսին կը գուշակեն թէ ան-
պատճառ Բեթղեհէմի մէջ պիտի ծնանի Քրիս-
տոս. Մատթ. Բ. 5: Անոր համար կարծես
տիեզերք աշխարհազորի կ'ենթարկուի, զի
մի՛ տիեզերաց Տէրը իր հայրենիքէն դուրս
ծնանի. ստիպեց Աստուած որ հեթանոս կայ-
սեր վճռական հրովարտուող՝ Մարգարէին
ճշմարտախօսութեան ծառայէ:

10. Կ'առարկուի թէ Հերովդէս թագա-
ւոր ըլլալով Հրէաստանի, ինչպէս կարելի
էր որ անոր ստացուածքին մէջ թուահամար
կատարուէր: — Պէտք է սակայն դիտել թէ՛
Հերովդէսի թագաւորութիւնը անուանական
էր, ինչպէս հռովմէական պետութեան հար-

կատու ամէն թագաւորութիւններ, զորս Վիրգիլիոս՝ Աւգոստոսի սիրելի բանաստեղծը, կ'անուանէր՝ կոռուելու դասապարտութեամբ, *Perituraque regna!* Որով Հերովդէս Հրէից համար իշխեցող էր, բայց Հռոմայեցւոյ համար հպատակ, եւ շատ հլու: Տէրութիւնը ու հարկը Հռոմայեցւոյ էր. անոնց կամաց համաձայն կը կառավարէր ու անոնցմէ կը կառավարուէր: Ուստի երբ ինքնակալն Աւգոստոս տիեզերական թուահամար մը հրամայեց, Հրէաստան՝ ի շնորհս Հերովդէի, չէր կրնար անկէ բացառութիւն մը կազմել:

11. «Կիւրենոսի Ասորւոց վրայ գասաւորութեան ժամանակ»: Աւետարանիչին միտքը սապէս պէտք է իմանալ. «Այս աւետարանագիրը՝ Կիւրենեայ քաղաքում առաջինը եղաւ» (եւ ո՛չ թէ Այս առաջին աշխարհահազիրը Կիւրենոսի ձեռքով եղաւ): Հմմ. Մարկ. ԺԲ, 30: Նոյնպէս ըսել չ'ուզեր անպատճառ որ Կիւրենոս ուղղակի ըրած ըլլայ այս թուահամարը, այլ թէ ան կատարուեցաւ երբ նա դատաւոր կամ նախագահ, վերակացու, կառավարիչ, կուսակալ (*Præses*) էր Ասորւոց: Աւետարանագիրը, իր տիեզերական ընդարձակութեամբը, առաջինն է. մասնակի թուահամարներ եղած են, ինչպէս գիտենք պատմութենէ:

12. Բանապաշտները մեծ դժուարութիւններ կը յարուցանեն Կիւրենոսի (կամ լաւ եւս Կուիրինոսի *Cyrenus* կամ *Quirinus*) նկատմամբ, որ Ասորւոց կառավարիչ կամ գաւառագետ կ'ըսուի, որ հաւասար է փոխ-հիւպատոսի (*Pro-Consul*) ըլլալու: Ասորիք (*Syrie*) ան ատեն Հռովմայեցւոց գաւառ մըն էր, եւ իր սահմաններն էին՝ ի Հս. Տաւրոս, յԱրլ. Եփրատ, ի Հր. Պաղեստին, յԱրմ. Միջերկրական. մայրաքաղաքն էր Անտիոք: Արդ այս Փոխ-Հիւպատոս Կուիրինոս, (Հմմ. Սուեա. Տիբ. 49.—Տակիտ. Տար. Գ. 48), ծնած էր ի Լուռուվիոն, համեստ ընտանիքէ եւ իր ջանքով ու թանկագին ծառայութիւններով հասաւ պետութեան ամենաբարձր պաշտօններուն. Հիւպատոս եղաւ յամին Հռոմայ 742. յաղթանակի պերճանքով մուտ չորձեց ի Հռոմ 755ին. երիտասարդ Կայս-

կեսարու ընկերացաւ ի Հայաստան, իբր անոր խորհրդականը եւ կառավարեց զԱսորիս 759էն մինչեւ 764. Արդ հոսկից կը ծագի ահա դժուարութիւնը: Աւետարանիչը շուրջ սասը տարի առաջ կը գտէ Կուիրինոսի Ասորւոց կուսակալութիւնը. ուրեմն, կ'ըսեն բանապաշտք, պատմական սխալ մըն է այդ:

Հաստորներ գրուած են այս խնդիրներու վրայ՝ ականաւոր եւ հոյակապ մեկնաբաններէ: Սապէս կը սեղմենք անոնց ներկայ խնդրոյս նկատմամբ խորհրդածութիւնները.

ա. Յիւրաւի Կուիրինոս Փոխ-Հիւպատի կարգուեցաւ Ասորւոց վրայ յամին (Հռ.) 759. սակայն Աւետարանիչը իրեն այս իշխանութեան վրայ չի խօսիր. այլ արտաքոյ կարգի մէկ անուանումին վրայ. երբ նա յամին 750 առանձինն իշխանութեամբ նախագահ կարգուեցաւ Կայսրէն հրամայուած տիեզերական մարզահամարի, եւ ի մասնաւորի՝ Ասորական Գաւառին վրայ: Ահա ինչու Տերտուղիանոս (*Ընդդէմ Մարկիոնի Դ. 49*) Սատուռնիոսի՝ Յիսուսի ծննդեան քիչ առաջ Ասորւոց յայնժամու Փոխ-Հիւպատոսին կը վերագրէ աշխարհագիրը, մինչդեռ Ս. Յուստինոս ստէպանդամ Կուիրինոսը կը նշանակէ իբր պետ աշխարհագիրն, խօսելով նոյն իսկ Հռոմայ հեթանոս գիտնականաց հետ: Երկուքն ալ ուրեմն գլուխ կեցած էին թուահամարի. Սատուռնիոս՝ իբր բնական Կառավարիչ Գաւառին, Կուիրինոս՝ իբր արտաքոյ կարգի կայսերական պատուիրակ:

բ. Շատ մեծ հաւանականութեամբ կը հաստատուի որ այս ընդհանուր թուահամարը սկսաւ յամին 750. բայց քիչ վերջը, մահուամբ Հերովդէի, ժամանակի մը համար ընդհատեցաւ. եւ վերջը կրկին վերսկսելով, աւարտեցաւ Կուիրինոսի ձեռքով: Եւ անոր համար Աւետարանիչը ըսել կ'ուզէ թէ՝ Աւգոստոս կայսեր հրամայած այս տիեզերական աշխարհագիրը աւարտեցաւ, ի յանգ ելաւ՝ Կիւրինոսի Ասորւոց վրայ Փոխ-Հիւպատի եղած ատեն:

գ. Հմուտ հեղինակներու ձեռքով կատարուած գիտնական հաշիւներով. — զորս հոս չենք կրնար նշանակել, — կը հաստատու-

ուի որ Կուիրինոս երկու անգամ Փոխ-Հիւպատի եղած է . առաջին անգամ Քրիստոսի ծննդեան ժամանակ . երկրորդ՝ 759—764 :

Զարմանալի է սակայն որ լատնագրերը այսօրս խստապահանջ քննադատութիւնով կը դատափետեն Աւետարանը . ճշմարտութեան համար լաւ է : Սակայն եթէ արտաքին ու է հին պատմիչի քով այս տեսակ մանրամասնութեան մը հանգիպէին , առանց ու է քննութեան կ'ընդունէին իբր քանձ մը : Այսչափ անիրաւ են : «Իբրեւ. fr̄pusn̄-եանք աւելի եւս Աւետարանից, եւ իբրեւ մարդեւ' դէպքերուն ժամանակակից հեղինակին հաւատքն ընծայեմք» կ'ըսէ Մալտոնադ : Աւետարանը Աստուծոյ զրահապատ ճշմարտութիւնն է . ինք չի խոցուիր . բայց կը խոցէ . երանի՜ թէ քար սիրտերը խոցուէին աւոր առատազեղ շնորհքներով :

ԳԵՌՈՐ Ի. Վ. ԹԵՐԶԻՊԱՇԵԱՆ

(Շարունակելի)

ԼԻՈՆԻ ԿԱԹՈՂԻԿԷ ԻՐԱՒԱՐԷՏՆԵՐՈՒ ՀԱՄԱԺԱՂԱՎԱԸ (*)

(Շար.)

«Այո՛ , կ'ըսէ Մ . Լամարգէլ , հարիւր տարի կայ որ Եկեղեցւոյ թշնամիները անոր մահը ստոյգ և վերահասու կը համարէին : Յեղափոխութիւնը՝ վերջին հարուած մը տուած ըլլալու էր անոր : Եւ ահա ան ատենէն ի վեր , տասնութնեկորդ զարուն մէջ , ուր անոր մահը տեղի պիտի ունենար , աշխարհիս մէջ անկիւն մը չկայ ուր նա ցոյց տուած չըլլայ իր յարաճուն կեանքն ու զօրութիւնը : Եւ արդի ժամանակներուս մէջ տեղի ունեցաւ երեւոյթ մը , արդարեւ շատ յարմար ամօթապարտ ընելու զանոնք որ արդէն իսկ հանդիսատես ըլլալ կը կարծէին կաթողիկէութեան կործանման : Այդպիսիք տեսան թէ բողոքական և հերձուածող մեծ տէրութիւնները որ բռնի բաժնուած էին Եկեղեցիէն , ստիպուեցան դէպքերու զօրութեամբ անոր հետ յարատեւ յարաբերութիւններով կապուիլ :

(*) Տե՛ս թիւ 422, էջ 746 :

Նախ՝ որովհետեւ իրենց երկրին մէջ կաթողիկէներու թիւը շատցաւ , սոսուարացաւ և իրենք հասկցան թէ երկրի մը ուժը պահպանելու ստալին պայմանն է ապահովել անոր զաւակներուն միութիւնը , և ասոր համար , կրօնական զգացումներու դաշնէլ ամէն կերպով զգուշանալ : Եւ երկրորդ՝ այս պետութիւնները յատկօրէն ըմբռնեցին նաեւ թէ արտասահմանի մէջ իրենց ազդեցութիւնը ապահովելու համար ամենուրեք հաշուի առնելու էին «աշխարհիս մէջ տարածուած հագին ուժը , կաթողիկէութիւնը» :

Մ . Լամարգէլ ցոյց կու տայ ապա Ֆրանսոյի արդի կառավարութեան՝ այս ճշմարտութեան ուղղակի դէմ գործելը , և կաթողիկէութեան դէմ լռնած սպառնական դիրքը , և կը յաւելու .

«Կաթողիկէները թող ահաբեկ չըլլան այդ սպառնալիքներէն : Բաւական է որ ընդդիմութիւնը ուժգին ըլլայ և անվեհեր . այդ «ստիպիչ և ճնշիչ» օրէնքներէն վախնալիք բան մը երբեք պիտի չունենան : Թո՛ղ աւելի արիութեամբ և աւելի եռանդով փոյթ տանին իրենց գործին , որ բնաւ չպիտի վնասուի ցորչափ իրենք գիտնան գործել և դէմ կենալ . . . »

«Թո՛ղ կաթողիկէները լաւ գիտնան թէ կուտելով իրենց հաւատքին համար կը կուտին նաեւ իրենց հայրենիքին համար : Որովհետեւ հիմայ թերեւս ամէն ատենէ աւելի դէպքերը հաստատած են ճշմարտութիւնը սա խօսքին . «Կաթողիկէութեան դէմ գործուածը Ֆրանսայի դէմ գործուած է :»

Այս անհամար ծափերով ընդմիջուած բանախօսութենէն ետքը խօսք առաւ Լիոնի Արքեպիսկոպոս Սըվէն Գերապայծառը և յուզեց , զմայլեցուց զամէնքը իր ճարտարխօսական հզօր և վսեմ շեշտերով :

Սքանչելի յառաջաբանէ մը ետքը բացատրեց Եկեղեցւոյ և Պետութեան յարաբերութիւնները : Յոյց տուաւ թէ Եկեղեցին եւ Պետութիւնը , իւրաքանչիւր իր շրջանակին մէջ , կատարեալ ընկերութեան հանգամանքներով օժտուած են . բայց նախապատիւ է Եկեղեցին որուն ուղղակի նպատակն է հոգ-

ւոց փրկութիւնը: Եկեղեցին՝ Նախախնայ մութեան հաստատած կարգին զօրութեամբ իրաւունք ունի այն ամէն բաներուն վրայ, որոնց պէտք ունի իր նպատակը՝ հոգւոց փրկութիւնը ձեռք բերելու համար: Իր իրաւունքն ու պարտքն է ետ մղել Պետութիւնը, երբ սա անիրաւարար մանէ իր սեփական հողին մէջ: Մարտիրոսներու արիւնը հայածիչ պետութեան երեսն ի վեր գոչելով՝ այս ճշմարտութիւնը բարձրաձայն յայտարարելով ձեռք բերաւ առ յաւէտ հոգիներու ազատութիւնը:

Բայց եկեղեցին և Պետութիւնը թէեւ իրարմէ զատ և անջատ են, սակայն հարկ է որ իրարու հետ յարաւել յարաբերութեան մէջ գտնուին: Եւ չստ աղյուսակի է «Ազատ եկեղեցի ազատ Պետութեան մէջ» գրութիւնը. զոր վերջերս կաթողիկէներ իսկ համարձակեցան գրուածելու: Այս գրութեան հետեւողը ստիպուած է ընդունելու որ Պետութիւնը կրնայ ազատ ըլլալ ամէն պաշտամունքէ, նոյն իսկ Աստուծոյ հաւատալէ:

Հարկ է որ Պետութիւնը ունենայ կրօնք մը եւ ճշմարիտ կրօնքը, որ է կաթողիկէութիւնը:

Արհիապատիւ Արքեպիսկոպոս Գերապայծառը արդի անիրաւ օրէնքները ուժգնակի հարուածելէ ետքը կը վերջացնէ խօսքը ցնցող եւ յուսալիր քաջայերական մը ուղղելով կաթողիկէ իրաւագէտներուն:

Կէսօրէն յիշող Հայր Տոմ Աէսսէ բանասիրաց Միլանի Հրովարտակին եւ Կոստանդինոսի մասին: Մ. Բրօյիլ Լօրան խօսեցաւ «Հին միապետութեան փամանակ Ծրանսայի մէջ եկեղեցւոյ վիճակին վրայ»: Մ. Բունիատօրէս կարգաց տեղեկագիր մը 1801ի Պայմանագրին մասին: Մ. Կիւսթալ թէրի իր սովորական պերճախօսութեամբ ճառեց եկեղեցւոյ եւ Պետութեան բաժանման մասին: Յոյց տուաւ թէ եկեղեցին կատարեալ ընկերութիւն մըն է, բանէ մը, մէկէ մը կախում չունի: Ունի իր սեփական յօրինածութիւնը, իր նուիրապետութիւնը, իր գերբնական նպատակը՝ հոգւոց փրկութիւնը, որով գեր ի վերայ կը բարձրանայ ուրիշ ամէն ընկերութենէ: Պետութեան պարտքն է պաշտպանել եկեղեցւոյ իրաւունքները: Մ. Կիւսթալ թէրի ուժգնօրէն կը հարուածէ արդի կառավարութեան պաշտամունքի մտտիապատիր կարգադրութիւնները, եւ կ'աւելցնէ: Բարեբախտաբար Պիոս Ժ. մէկ չունչով տապալեց այդ սատանայական կազմածը. եւ իր խօսքերուն լոյսով ցոյց տուաւ մեր բռնելիք

ճամբան, որ դէպ ի յաղթանակ կ'առաջնորդէ, որ է անարատ պահել կաթողիկէ սկզբունքները:

(Շարունակելի)

ՄԱՐԶՈՒԱՆԷՆ

(Շար. եւ վերջ)

— Երբորդ օրը Յիսուսեան Հաքք հրաւիրուած էին օրհնութիւն տալու և Արհի. Գերապայծառը գրուածեց քրիստոնէական բարբարաւորեցութիւնը ընկերութեան վրայ՝ ցուցնելով թէ միայն քրիստոնէական սկզբունքները կրնան արմատէն լուծել ընկերական սագնապ ու վէճ: Բրիտոս ըրաւ զերկիրը պանդոկ մը, մարդն անցորդ մը երիքով գացող վիրաւոր ճամբորդին պէս, որուն առջեւէն բնական օրէնք, հրէական օրէնք ու հեթանոսական օրէնք անցան սռանց կանգնելու: Բրիտոս ինքը կանգնեց. և հարուստ աղքատի հետ վէճը փակեց՝ նկատելով աշխարհային բարիքներն միջոց և ո'չ վախճան: Լսեցին հարուստ և աղքատ Աստուածային բերնէն թէ մանաւանդ հարստութիւնը արգելք է փութով ճամբորդութեան, լսեցին աղքատին երանութիւնը ու հարուստ և աղքատ եղբայրացուն: Հեթանոսը զաղքատը ճակատագրէն պնտժուած մէկը նկատեց և խնովին ծովը թափեց. իսկ Բրիտոս զայն աղբւեաց մէջէն. իսկ վեր կանգնեց ու իր գիրկն հրաւիրեց ստոր հետ մէկտեղ օրինաւոր հարստութիւնը արդարացուց, յանցաւոր աղքատութիւնը զատապարտեց, երկուքին ալ իրաւախոհութեան օրէնք դրաւ աշխատութիւնը, զոր նուիրագործեց իբրեւ քաւութիւն մը և ահա դրամ և ուժ գումարուեցան աշխատութեան մէջ և վէճը փակուեցաւ: Ստոր մէջ ալ ընդհարումը արգիլելու համար դրամի և ուժին, այս է հարուստի և աղքատի մէջ, սիրոյ օրէնքը և ահա զիրար չփեցին առանց ճշմունչի և մաշելու և վէճը դադրեցաւ. ընկերական շէնքի մէջ մէկ քարին գցուածքը միւսին փոսը լեցուց սիրոյ շաղախը ամէն անհարթութիւն ձեւեց

սիրոյ օրէնքը գործնական ըրաւ ողորմութեան պատուիրանաւ, զոր նոյն ոճով բացատրեց Արհի. բանախօսն ցուցնելով անոր գործնական դերն աշխարհի մէջ. սնիկայ հարուստին ձեռքը աղքատին ձեռաց կը զուգէ. անիկայ միոյն առաքելութեամբ միւսին նուազութիւնը կը պարտկէ. «այլ հաւասարութեամբ յայժմու ժամանակիս ձեր առուելութիւնդ ի նոցա պակասութիւն» (Բ. Կոր. Բ, 14), ասոր հակառակ ժառանգութիւնը գողութիւն է. և յափշտակութիւն ըստ Ս. Գրոց՝ եւ ըստ Հարց Եկեղեցւոյ. մինչդեռ ողորմութիւնը, ըստ Ոսկերիանի, շահագործումի ամենէն աւելի շահաբեր արհեստն է. ասոր վրայ հիմնուած հին քրիստոնէութիւնը ինչ եղբայրսիրական հաւատաւորութիւններ ունէր առաքելական դարերէն սկսելով, որ այսօր բաղձալի պիտի ըլլային և կրցաւ նա Տերաւորդիանոսի բերնով պօռալ հեթանոսաց երեսն ի վեր թէ այդ ժառանգութիւնը որ ձեր մէջ կազի եւ կոռոյ եւ թափանցանց պատճառ է, մեր մէջ միութիւն կը շինէ. Փակեց սրտառուջ բացադարձութեամբ առ խաչն, որուն վրայ կնքուեցաւ մարդկային հաշտութիւնը Յիսուսիւ Քրիստոսիւ, որ մարդուն համար աղքատացաւ, մինչդեռ մեծատուն էր, որպէս զի իւր աղքատութեամբ մարդն հարստանար և ահա ամէն վէճ լոսւած է հարուստի ու աղքատի մէջ. — Գիւտ խաչի օրն եղբայրութեան հանգուցեալ և կենդանի յարեարաց համար պատարագեց Արհի. Գերապայծառ Տէրն, յորում ամէն անդամներն իսուռն բազմութեան մը հետ մերձեցան Ս. Հոգորդութեան. հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ, որմէ ետքը եղբայրութեան նոր ընթերցատան բացումը շնորհաւորուեցաւ. հանդիսիւ, ոչառմական եւ երմուական տեղեկագիր մը. Սամսոնէ եւ այլունս եկած մաղթողական նամակներ նուիրատուներու յիշատակութեամբ կտրդացուեցան ծախահարութեանց մէջ. նոյն օրն հասած էր պատեհօրէն Ամեն. Հոգեւոր Տիրոջ նուէրն ալ զոր խանդավառ կեցոյնէն ըրով ողջունեցին նկատելով մանաւանդ որ նա ժամանակաց զժուարթութեանը մէջ հայրաբար յիշած էր Մարդուանու համեստ եղբայրութիւնը:

Երեկոյեան՝ արժանաւոր չքեղութեամբ փակուեցաւ տօներու շարքը. երեկոյեան ժամերգութեան վերջը Արհի. եպիսկոպոսնիս նորէն խօսեցաւ ցուցադրելով քրիստոնէայ աշխարհի եղբայրսիրական գործերն ու հաստատութիւնները, որոնք Սօսիալիզմի հերքումը ու անոր քանդիչ հոսանքին գէժ թուած են. ու անոնց օրինակաւ խրախուսեց Աղքատախնամ Եղբայրութիւնը եւ մաղթեց որ մեր երկրին մէջ ալ կանխէին անոնք Սօսիալիզմի այսօր բառացի՝ վաղը իրական սպառնացումը ի վնաս քաղաքացիութեան եւ հայրենեաց. Բանախօսութեան վերջը, կազմուեցաւ չքեղ թափօրը. առջեւէն կ'երթար եղբայրութեան դրօշակը, որուն մէկ կողմը գծագրուած էր անոր զինանշանը. խաչ մը ցոլքերով, որուն ստորոտը երկու ձեռք զիրար կը սեղմեն, կապուտ ժապաւէն մը միոյն թեւէն իջնելով վէտ ի վէտ միւսին վրայ կը հանգչէր եւ վրան գրուած էր. « Սիրեցէ՛ք. բարի արարէք» Ա. Ե. Կ. Զ. Դրօշին ետեւէն զոյգ զոյգ կու գային Եղբայրութեան հիմնադիր ու բարերար անդամներէն Մարգուան գանուողները՝ 60 հոգի, մոմեղէն ձեռքերին. յետոյ դպրաց դասը, որմէ վերջը քահանայք եւ Արհի. Վիճակաւորը հայրապետական զգեստով. բակէն անցնելով մտաւ եկեղեցի թափօրը եւ ահա դասը լուսով ու զոգուեցաւ. նուագախումբի ընկերակցութեամբ երգուեցաւ Զքեղ Արտուած զովա. բանեմք եւ Ամենասուրբ Հաղորդութեան օրհնութեամբ փակուեցաւ հանդէսը, որմէ թեւադրուած խանդավառութիւնը նոր պարբերութեան յաջողութիւնը գուշակել կու տայ այժմէն. Վասն զի նոյն երեկոյ արտաքոյ կարգի նիստ գումարուելով քսան եւ հինգ աղքատաց մէկ մէկ արծաթ թափնելու յանձնախումբ կազմուեցաւ, որ անմիջապէս գործադրեց իր բարերար գործը ի յիշատակ իւր քսան եւ հնգամեայ չրջանին. Այսպէսով մեր փոքր հասարակութեան այս եղբայրութիւնը տառնեւհինգ օր շարունակ ամբողջ Մարգուանի հիացումին առարկայ եւ պղծիչ ու փեւորման առիթը եղաւ:

Վարչութիւն
Աղխատիսնամ Եղբայրութեան Կ. Զ.
Ի Մարգուան

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Հ Ո Ս Ե Ի Կ Ա Յ Ո Ղ Ի Կ Է Ա Շ Խ Ա Ր Հ

Ս. Հայրը, Գործակալ առաքելական նախարար ան-
ունեց Վաստայո տի Գործակալական Գերատարածա-
նոց

Հռոմ հասան Սրհի. Արհի. Թուշէ, եպիսկո-
պոս Օրդէանի, Դաւիթ, օգնական եպիսկոպոս Մոն-
րլիէի, Սըվէն, արքեպիսկոպոս Լիւնի

Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

Դեկտեմբեր 1ին դեպքանական ընդունելութեանց
միջոցին քանի մը դեպքանական ընդունելութեանց
վրայ տեսակցեցան Եպարքոսին հետ և խնդրեցին որ
իրենց պարզէ Բ. Դրան տեսակէտը բարենորոգմանց
ծրագրին նկատմամբ: Իրազեկ չըջանալներու մէջ կը
կարծուի թէ, կըսէ տեղական թերթ մը, Բ. Դրան
տեսակէտը միշտ միեւնոյնն է այն օտար քննիչներուն
մասին որ բարենորոգմանց համար պիտի անուանուին
իրեն օտմ. պաշտօնատարներ:

Նոյեմբեր 29ին Չաւէն պատրիարք ստացու-
ած պաշտօնագիր մը «իսլամ երեստարգանք» ստորագրու-
թեամբ: Այս գիրին մէջ նախատալից ոճով կը պա-
հանջեն որ Պատրիարքը կառավարութեան գործերուն
չը խառնուի և իր հոգեւոր պարտականութեանց հե-
տեւի հակառակ պարտադրելի օսմանցի իսլամ երեստ-
արգանքը իրենց պարտականութեանը ի դարձ պիտի
դնեն:

Ազատամարտին ալ կարգ մը նախատինքներ
պարունակող պատճառագիր մը զրկուեք է:

Ժամանակ, որ դադարման դատապարտուած
էր, սկսած է վերհրատարակուիլ:

Տըք. Շիւթլիքի Նոյէ Ֆրայէ Բէքէի մէջ ու-
սումնասիրութիւն մը հրատարակած է Անտաղուի

երկաթուղիներուն նկատմամբ, զոր սապէս կ'եզրա-
կացմէ. — «Արեւելեան նահանգներու բարենորոգմանց
և երկաթուղիներու խնդիրներուն միջեւ մեծ կապ մը
ըլլալով, Արեւելեան նահանգներուն երկաթուղիները
քաղաքական մասնաւոր կարեւորութիւն մը ունին:
Սոմ. կառավարութեան վաղաքարը այն է թէ Արե-
ւելեան նահանգներուն էական պէտքը՝ անդորրու-
թիւնն ու բարեկարգութիւնն է, ինչ որ երկաթուղի-
ներով և խճուղիներով պիտի հաստատուի Բ. Դրան
այս գաղափարը ճիշդ է: Ռուսիա ինքն իսկ դեռ չէ
կրցած ապահովել կովկասի հայաբնակ վայրերուն
Միջին Դարու վիճակէն քաղաքակրթութեան մէջ
մուտքը»:

Տօքուս երբ Էրէյիէն երկու ժամ ետքը Տաւ-
րուս անցած էր և վար պիտի իջնէր, օգնաւոր չկը-
ցաւ դիմադրել հովին սաստկութեանը և վար ինկաւ:
Օգնաւորին մէկ թեւը բոլորովին կտրեցաւ, և միւս
մասին ալ վնասուեցան: Տօքուս անվնաս ազա-
տեւան պատճառը այն էր որ օգնաւոր անտառի մը
մէջ ինկած էր: Տօքուս, որ Ատանա գացած էր, ըսու-
թէ օգնաւոր գիւղացիի մը պահպանութեանը յանձ-
նուած էր և թէ ալիւս ճամբան շարունակելու ան-
կարող ըլլալով, իր ընկերոջը՝ Ռուի հետ արկածին
վայրը պիտի երթար օգնաւոր քակելու: Յետոյ, ցա-
ւալի ուրիշ լուր մը առնուեցաւ. Պահպանը օգա-
նաւին մէջ նստելով սկիսեալ մը կը վառէ, բայց լուց-
կիէն պէնզինը պայթելով օգնաւոր կրակ կ'առնէ և
ամբողջովին կ'այրի: Գիւղացին չի կրնար մարել և
մինչեւ որ օգնաւորին դուրս կ'ելլէ մարմինն վարի
մօտը կ'այրի: Տեղական կառավարութիւնը քննու-
թիւն կը կատարէ:

Բարիկ, Դեկտ. 2. — Փոխառութեան օրինագծին
վիճարանութեան առթիւ Մ. Պառլամենտի դահլիճը
ստիպուեցաւ հրաժարիլ:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Դեպքեր եւ սկզբունքներ	769
Հին արժեքաւոր վաւերացումներ	772
«Ֆալօ»	774
Լուի Վէյեռի հարիւրամեակը	776
Ինքնագիր տպագրող Լուի Վէյեռի	777
Եօթնեակ Գրիսոնէի	778
Մեկնութիւն Ս. Աւետարանի	779
Լիոնի Կարդիլէ Իրաւագէտներու համաժողովը	481
Մարգուանէն	782
Տեղեկագրական	784

ԱՐՏՕՆԱՏԵՐ

ՅՈՎՀ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԱՎԳՐԱԳԵՏ

ԳԵՈՐԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊԱՇԵԱՆ

Տպագր. Կ. Արձագանգ Երաքաթերի, Երեւան, Պարսկ փողոցի 5, Կ. Պալիս

Երանելի Տէր Կոմիտաս Քահանային վարքը, առանձին
հրատարակուեցաւ ընտիր Թուղթի վրայ, մաքուր տպագրու-
թեամբ և երեք պատմական պատկերներով:

Փափաքելի է որ ամէն Հայ Կաթողիկէ ունենայ այս գե-
ղեցիկ մատենիկը, որուն միակ նպատակն է ծանօթացնել ամէ-
նուն Երանելի նահատակին գերազանց բարեմասնութիւնները, և,
անոր ջերմեռանդութիւնը ծաւալելով, հրաւիրել ամէնուն վրայ
անոր բարեխօսութեան անդուգական արդիւնքները:

Գիւն 5 դանելիսն, Էջ 144 ամուռ թղթակազմ

Գրքոյիս երեք պատկերները, 1. Տէր Կոմիտաս քահանա-
յական զգեստով և իր շիրիմը, 2. Տէր Կոմիտաս դատաւորին առ-
ջև, 3. Գլխատումը, առանձին ալ կը ծախուին. մեծաքանակ գը-
նողներու, գոհացուցիչ գեղջ:

ԿԸ ԾԱԽՈՒԻ «Տարրական Սկզբունք Քրիստոնէական Վար-
դապետութեան» հաստատեալ եկեղեցական իշխանութենէ եւ
կիրառութիւնը հրամայեալ: Բաղկացած է 136 էջերէ: Գին, ա-
մուր Թղթակազմը 2 դհկն.:

WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Société Anonyme au Capital entièrement versé de K. 130.000.000

Réserve: K. 37.300.000

SIÈGE CENTRAL à VIENNE: I. Herrngasse 8.
avec 12 Agences dans les principaux quartiers de la ville.

SUCCURSALE DE CONSTANTINOPLE: Place de Karakeuy, Galata

BUREAU DE STAMBOUL: Elkiatib Han

BUREAU DE PÉRA: St. Antoine Han

Succursales et Agences à:

<i>Aussig a/E</i>	<i>Carlsbad</i>	<i>Marienbad</i>	<i>Teplitz</i>
<i>Bielitz-Biala</i>	<i>Friedek-Mistek</i>	<i>Pilsen</i>	<i>Tetschen</i>
<i>Brünn</i>	<i>Graz</i>	<i>Prag</i>	<i>Villach</i>
<i>Budapest</i>	<i>Klagenfur</i>	<i>Prossnitz</i>	<i>Wr. Neustadt</i>
<i>Czernowitz</i>	<i>Lemberg</i>	<i>St. Poellen</i>	

La Succursale de Galata, l'Agence de Stamboul et celle de Péra s'occupent de toutes opérations de banque, telles que:

Avances en Compte-Courant nanties par des titres ou des effets.

Avances sur Marchandises.

Achat et vente de change sur l'Etranger.

Escompte d'effets.

Emission de traites, chèques, lettres de crédit.

Ordonnancements télégraphiques sur la Turquie et l'Etranger.

Encaissement de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages.

Encaissement d'effets sur la Turquie et l'Etranger.

Ouverture de Comptes-Courants, d'accréditifs simples et documentaires.

Exécution d'ordres de Bourse, garde de valeurs publiques etc. etc.

La Succursale du **Wiener Bank-Verein** à Galata et ses Agences à Stamboul et Péra ont institué pour faciliter à la petite épargne le placement de ses économies un service de Caisse d'Epargne aux clauses principales suivantes:

Les versements doivent être effectués en Piastres or; il n'est point accepté de versement inférieur à Pst. 50.—

Le Wiener Bank-Verein servira au déposant un intérêt fixé aujourd'hui à $3\frac{1}{2}$ % p. a. pour toute somme jusqu'à concurrence de Ltq. 1000— et 3 % seulement pour l'excédent dépassant ce chiffre.